

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է առանձին լիցիտով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 13 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Վառվառէ Յովհաննիսեան, Մարիամ, Կատարինէ, Կոստանդին եւ Բարսեղ Իւզը- յեանցները ցաւօք սրտի յայտնում են ծանօթներին եւ բարեկամներին՝ առաջինը իր ան- մոռանալի ամուսնու, միւսները իրանց սիրելի հօր՝ նաղվօրնի սօվէտնիկ

ՅԱՐՈՒԹԻՒՆ-ԲԵՎ ԻԻԶԲԱՇԵԱՆՅԻ

Մեր, որ տեղի ունեցաւ մարտի 13-ին Ամբիճըր—չարաթ, մարտի 16-ին, երեկոյեան ժամի 7-ին, իր բնակարանում, Կատարինէի պերետոյի, տուն Ամբիճանի, իսկ յուղարկւորութիւնը—կիրակի, մարտի 17-ին, դէպի Աւետեաց Ջգրա- չիկ եկեղեցին, եւ այնտեղից դէպի Ոսթիվանքի գերեզմանատունը: 2—2

Եղիսաբէթ Յարութիւնեան եւ Գէդէոն Բարսեղեան Սիրաղեանները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին եւ բարեկամներին՝ առաջինը իր անմոռանալի հօր, իսկ երկրորդը իր աներով՝ նաղվօրնի սօվէտնիկ

ՅԱՐՈՒԹԻՒՆ-ԲԵՎ ԻԻԶԲԱՇԵԱՆՅԻ

Մեր, որ տեղի ունեցաւ մարտի 13-ին Ամբիճըր—չարաթ, մարտի 16-ին, երեկոյեան ժամի 7-ին, իր բնակարանում, Կատարինէի պերետոյի, տուն Ամբիճանի, յուղարկւորութիւնը—կիրակի, մարտի 17-ին, դէպի Աւետեաց Ջգրաչիկ եկեղեցին, իսկ այնտեղից դէպի Ոսթիվանքի գերեզմանատունը: 2—2

ԲՈՒՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ
Փոխադարձ օգնութեամբ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Մի նոր լրագիր Ասորիստանում. Նամակ Շամախուց. Նամակ Երևանից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարիզի հայոց բարեգործական ըն- կերութեան տարեկան երեկոյթը. Կ. Պոլսի լրա- գիրներից. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ. Մի հաղուագիւտ կին.

ՓՈՒՍԱՒԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ

Մեր գաւառներից յաճախ գանգատներ են գալիս, որ բժիշկներ չը կան գաւառ-

ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ

ՄԻ ՀԱՅՈՒԱԳԻՏ ԿԻՆ (Նամակ Պարիզից)

Ձեզ արդէն յայտնի է Կլէմանս Բոյէի մահը: Բոյէ եւ տալիս ինձ դարձեալ մի քանի խօսք ասել այդ հաղուագիւտ կնոջ մասին: 19-րդ դարի ֆրանսիացի կանանց ամենանշանաւորն էր տիկին Կլէմանս Բոյէ:

Նրա թաղմանը յուղարկւորների ահագին բազմութեան կէսը կարելի է ասել կանաչ էին, որովհետեւ կային բոլոր ֆրանսիացի աչքի ընկնող կանայք—խառնված մի խումբ բանուոր եւ ար- ձանաւոր օրիորդների հետ: Եւ իրաւ, կանանց անոր իրաւունք ունէր պարծենալու, որ մի այսպիսի ներկայացուցիչ է ունեցել:

Որպէս ֆրանսուհիների մեծամասնութիւնը՝ Կլէմանս Բոյէն էլ ստացել էր իր նախնական կրթութեան վաճառքից մէկում, ինչպէս իր ժամանակի կանայք: Երբ օտոված հազուադէպ ընդունակութիւնը, ինչպէս իսիստ շուտ է հասկանում թէ ինչ գործով պիտի զբաղուի, եւ դուրս գալով վաճառքի, սկսում է ինքնակրթութեամբ պարզել եւ ազատ դասավորութիւններ յա- մարել:

Արդէն երեսուն տարեկան հասակում նա հրատարակում է «Զարկերի թէօրիա» աշխա- տութիւնը, որի համար նա ստանում է Ակա- ճիմիայից նշանակված պարգևի կէսը. միւս կէսը նշանակված էր նշանաւոր Պրուդոնի մի աշխատութեամբ, դա վաթսուսական թւական- ներումն էր:

Կլէմանս Բոյէն պատկանում է այն սերունդի

ներում եւ որ հիւանդութիւններ երեւցած ժամանակ մարդիկ անկարող են օգտվել բժշկական խորհուրդներից: Միայն այն դեպքերը, որոնք մօտ են քաղաքին, դեռ հնարավորութիւն ունեն երբեմնապէս դի- մելու բժշկին, իսկ մնացածները կամ եր- բէք չեն դիմում բժշկի, կամ շատ հա- զուադէպ հանգամանքներում:

Մանուսկր անմիջիցս եւ անելանելի է դառնում գիւղացիների վիճակը, երբ երե- տում են տարափոխիչ հիւանդութիւններ, երբ, օրինակ, դիֆտերիա, սկարլաթինա, ծաղիկը եւ ուրիշ հիւանդութիւններ բազ- մաթիւս գոհրել են տանում ընտանիքնե- լից: Բժիշկը կարող էր իր խորհուրդնե- րով եւ դեղերով օգնել, կարող էր թեթե-

կնցիկօգնելի գիտնականներին, որոնց նպա- տակն էր կարծես գիտութեան բոլոր ճիւղերում միաժամանակ լինել մասնագէտ: Եւ հէնց նրա այդ բազմակողմանի գիտութիւնների պատճա- րով է, որ նա ունի իր առանձին եւ բարձր տեղը 19-րդ դարի նշանաւոր կանանց մէջ: Կ. Բոյէն էր, որ առաջինը ամբողջ ֆրանսիայում հասկացաւ եւ գնահատեց իր դարի ամառ թէօրիաներից մէկը, այն է դարվինիզմը. այս- պէս՝ նա թարգմանեց 1862 թ. Նիւթոնի Դարվինի գլխաւոր երկերը, որից յետոյ մի շարք գրքե- րում նա ժողովրդականացրեց անգլիացի գիտ- նականի թէօրիաները. կարելի է ասել, որ ֆրան- սիացիները այդ ճիւղում շատ քան են պարտա- կան տիկին Բոյէին.—այդ էր, որ սկսեցին Ռէնանի թիւղ տուեց ասել. «Բոյէն դարիս ամենաուժեղ ուղեղներից մէկն է—եւ իր հան- ճարով այդ կինը հաւասար է այդ մարդու հան- ճարին»:

Վաթսուսական եւ եօթնամասնական թւական- ներում նա գրեց եւ մի շարք ինքնուրոյն աշ- խատանքներ, ինչպէս օրինակ «Հասարակութեան սկիզբը», «Մարդկային ցեղերի առաջանալը», «Կրակը նախնական աղբերի մօտ» Այսքանը, այսպէս ասած, բնական գիտութիւնների մէջ, Բոյէն Կ. Բոյէն յայտնի է եւ իրեն ջաղաքա- տնտեսագէտ եւ հասարակագէտ. այդպէս՝ մեր ժամանակին նա շատ ազմուկ հանեց իր մի աշխատանքով, որ պատասխան էր Պրուդոնի «Տնտեսուհի թէ սիրուհի» յայտնի գրքին: Նոյն- պէս նա ունի գրած հետեւեալ աշխատութիւն- ները. «Մտաւոր էթիլոյցիան», «Ծէնքեր անդր- պատմական շրջանում», «Կինը հին դարերում», «Ազգերի հասարակական շրջանները» եւ այլն:

Վերջին տասնեակից տարին նա զբաղված էր մի մեծ աշխատանքով, որը, իր ասելով,

ւաղնել հիւանդութիւններ, դադարեցնել նրա տարածումը եւ շատերին ազատել մահից. բայց նա չը կայ, եւ բազմաթիւ հիւանդ- ներ դատապարտվում են մահի:

Մի քանի խոշոր գիւղեր եւ աւաններ փորձեցին բժիշկներ պահել. սակայն մի- չեւ այժմ անկարող եղան այնպիսի կազ- մակերպութիւն տալ գործին, որ հրաւիր- ված բժիշկները օրէցօր աւելի ու աւելի կապվեն իրանց պաշտօնավարի հետ եւ բաւարարութիւն ստանան իրանց կենսիցից:

Մենք շատ լաւ գիտենք, որ մեր երի- տասարդ բժիշկներից շատ քան են հա- մաձայնվում գնալ գիւղերը, որ նրանց հա- մար աւելի հաճելի է քաղաքներում պաշ- տօններ գտնել եւ գործել, եւ որ այդ պատ- ճառով դժուար է լինում նրանց գոհա- ցնելը: Անկասկած, ցաւալի է, որ մեր երի- տասարդները իրանց ինքնաբերաբար չեն ձգտում դէպի գիւղերը եւ գաւառի խոր- քերը: Բայց եւ գիւղական հասարակու- թիւնները իրանց կողմից պէտք է ջանք գործ դնեն կենցաղավարական յարմարու- թիւններ ստեղծելու բժիշկների համար եւ զիւրացնելու եւ տանիքի դարձնելու հա- մար գաւառական կենսը:

Այդտեղ անհրաժեշտ է, որ երկու կող- մերն էլ հօգան գործի աջողութեան մա- սին եւ միաբան ոյժերով նպաստեն բժշկա- կան օգնութեան իրագործման գաւառնե- րում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Paul Lindau: „An der Westküste Klein-Asiens“ mit 15 Bildern. Գ. Լինդաւ, ֆոքր Ասիայի արեւմտեան ափերում՝ 15 պատկերով: 330 էր. Բերլին:

Այն օրվանից, երբ գերմանական զաղթակա- նական քաղաքականութիւնը առաջնակարգ տեղ գրաւեց, ընդհանրապէս ամբողջ Թիւրքիան եւ յատկապէս Փոքր Ասիան զարձաւ մի գրաւիչ վայր գերմանացի ճանապարհորդների ու գիտ-

պէտք է ընդգրկէր ամբողջ տիեզերքը եւ նրա ընթացքը փիլիսօփայական—նատուրալիստական տեսակէտից:

Այդ երկերի միայն առաջին մասը հրատարակ- վեց անցեալ տարի, իսկ մնացածը մնում է որպէս ձեռագիր, որը, ինչպէս նրա ուրիշ բազ- մաթիւս անտիպ աշխատանքները, երեւի նրա բարեկամները շուտով կաշխատեն հրատարակել:

Այս բոլորից յետոյ զարմանալի չէ, որ նա առաջինը ֆրանսիացի կանանցից ընտրվեց մի շարք գիտական ընկերութիւնների—«Հանքաբա- նական», «Տնտեսագիտական», «Հասարակաբա- նական», «Մարդկային իրաւունքների լիգայի» եւ այլն անդամ, իսկ «Մարդաբանական» ընկե- րութեան մէջ նա Կլօդ-Բերնարի, Բրօկայի եւ ուրիշների հետ ընտրվեց որպէս պատուաւոր անդամ: Պէտք էր տեսնել, ասում է յայտնի Լէտուրնոն, մեր զարմանքը, երբ այդ նուրբ կինը, ձեռքում բռնած մի ոսկեր կամ մարդկա- յին մի գանգ, բացատրում էր մեզ իր հայեացք- ների կամ գիւտերի մասին:

Այդ էր նոյնպէս պատճառը, որ բոլոր լուրջ գիտական հանդէսները իրանց պատիւ էին հա- մարում տեսնել տիկին Բոյէին, որպէս իրանց աշխատակից:

Մանից երկու տարի առաջ, 69 տարեկան հասակում, նա արժանացաւ «Պատուաւոր Լէ- գէօնի» չքանչափին, մի բան, որ շատ քիչ է պատահում ֆրանսիացի կանանց վերաբերմամբ:

Սակայն, որպէս լայն գաղափարների տէր՝ նա զուտ գիտութեան մէջ խրված չը մնաց: Ինչպէս եւ իր շատ նշանաւոր համազգայիննե- րը, նա ժամանակ գտաւ եւ սէր ունեցաւ զբաղվել որոշ չափով եւ հասարակական հար- ցերով: Եւ յիշուի Կլէմանս Բոյէն հրապարակ ելաւ, որպէս աշխատակից առօրեայ հարցերով զբաղվող ֆրանսական օրաթերթների, ինչպէս—

նականների համար Այդպիսի ընդհանուր հե- տաբերութիւնը առաջ բերեց մի մեծ շարք գրվածքներ, որոնք այս կամ այն ձեւով, այս կամ այն չափով չօղափում են Թիւրքիայի տըն- տեսական—սօցիալական վիճակը եւ պատկերա- ցնում են նրա տեղագրութիւնն ու բնական հարստութիւնները:

Ահա այդ գրութեան շարքին է պատկա- նում եւ պ. Լինդաւի աշխատութիւնը, որ իր մէջ պարունակում է հէգէյեան ծովի գլխաւոր կղզիների եւ ծովափնեայ քաղաքների նկարա- գրութիւնը:

Գիրքը զարգարված է բաւական աջող պատ- կերներով եւ կարդացվում է հետաքրքրու- թեամբ:

Իւրաքանչիւր բնակավայրի մասին խօսելիս՝ հեղինակը յիշում է նաեւ գլխաւոր արտադրու- թիւնները եւ թոռնիկ կերպով պատկերա- ցնում է ազգաբնակչութեան առանձնայատկու- թիւնները:

Այսպէս օրինակ. Զմիւռնայի վիլայէթի նկա- րագրութեան մէջ նա յայտնում է, որ այդտեղ իւրաքանչիւր տարի արտադրվում է 23,000,000 ֆրանկի չորացած խաղող, 10,000,000 ֆր. թուզ, 10,000,000 ֆր. ափսոս, 18,000,000 ֆր. ձիթապտուղ եւ ձէթ, 7,000,000 ֆրանկի ծխա- խոտ եւ 26,000,000 ֆր. ուրիշ նիւթեր:

Իսկ արդիւնագործութեան առարկաներից ա- ռաջին տեղը բռնում են գորգերը: Նշանաւոր են Ուշակ, Գէօրդէս, Կուլա եւ Դեմիրչի գիւ- ղերը, որոնք պատրաստում են տարեկան 367,000 քառակուսի մետր գործ՝ 6,414,000 ֆրանկ ար- ժողութեամբ, այսինքն.

Ուշակ	250,900 քառ. մետր	3,896,000 ֆր.
Գէօրդէս	56,000 » »	1,127,000 »
Կուլա	35,400 » »	862,000 »
Դեմիրչի	25,000 » »	529,000 »

Միայն Ուշակ գիւղում գորգագործութեամբ զբաղված են 3,000-ից աւելի կանայք: Այստեղ եւ առհասարակ ամբողջ վիլայէթում գորգա- գործների օրավարձը շատ ստոր աստիճանի վրա է կանգնած, այն է օրական 30 պֆենիկ կամ մօտ 14 կոպէկ: Զմիւռնայի գորգերը արտա- հանվում են գլխաւորապէս դէպի Անգլիա, Ֆը- րանսիա, Ամերիկա, Աւստրիա, Գերմանիա եւ

«Raisons» եւ «La Fronde» (զուտ կանանց օր- դան): Տեսնելով թէ ինչ խղճալի մտաւոր մա- կերեւոյթի վրա է կանգնած կինը, նա ախոյ- եան դուրս եկաւ որպէս ֆեմինիզմի ջերմ պաշտպան, թէեւ արդէն նա ինքը իր ներկայ- ութեամբ կը բաւէր, որ ցոյց տար, թէ կինն էլ կարող է գիտութեան գաղաթնակէտին հաս- նել, եթէ միայն համակրու միջոցներ տան նրան: Իր բոլոր յատկութիւններով հանդերձ Կ. Բոյէն զարմանալի բարի եւ իր գաւառները սիրող մայր էր:

Վերջին տարիները, չը նայած, որ արդէն վաթսուն տարեք անցել էր, ամենայն պատ- րաստակամութեամբ Բոյէն օգնում էր երիտա- տարդ կանանց խմբերին թէ իր խօսքով եւ թէ իր խորհուրդներով, եւ պէտք է ասել, որ ներ- կայ ֆրանսիայի կանանց սերունդը շատ քան է պարտական այդ համեստ եւ մտախառնութիւնից ազատ Կլէմանս Բոյէին:

Եւ այսպէս, անընդհատ նա շարունակում էր իր գործունեայ կենսը մինչեւ իր վերջին շունչը. նա մեռաւ 71 տարեկան. եւ զարմա- նալի չէ, որ կին—խմբագիրներից մէկը իր դամ- բանականը վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Մենք, կանայք, հպարտ ենք, որ Կլէմանս Բոյէն կին էր եւ ցանկանք, որ մեր կանանց մէջ գտնվեն շատերը, որ նրա պէս պարեն եւ նրա պէս մեռնեն»:

Եւ իսկապէս՝ կինը, մանաւանդ ֆրանսիացի կինը, որի մտաւոր մակերեւոյթը այնքան էլ բարձր չէ, պէտք է հպարտանայ տիկին Բոյէին, որովհետեւ ներկայ ժամանակներում մինչեւ իսկ այդ մարդկանց մէջ շատ եւ շատ հազուադէպ են նոյնքան խոր, որքան եւ լայն էնցիկլօպէդիկ գիտութիւններով եւ գաղափարներով օժտված անհատներ, որպէս էր Կլէմանս Բոյէն:

Թագուհի Բերքերեան

այն Այդ վիճակի ազգայնական թիւը հասնում է 1,396,500-ի, որի ստույգ մեծամասնութիւնը—1,093,500 մահմեդականներ են, իսկ մնացածը այլ եւ այլ ազգութիւններ, որոնց շարքում եւ 15,000-ի չափ հայեր:

Պ. Լինդաու հայերի մասին հետեւեալ կարծիքն է յայտնում.

—Հայերը, ինչպէս ամբողջ արեւելքում, նոյնպէս էլ այստեղ, ամենաանապատն են ամենաանապատական վայրերում: Զմեռնային ամենամեծ հարուստները հայեր են: Նրանք զէպի արհեստները սէր ու ընդունակութիւն չունեն (?): Բողոքային գործերում անընկճելի վարպետներ են: Նրանցից միայն ամենատեղեւորներն եւ ուղեւորներն են բռնակիր ու երկրագործ դառնում (?): Գիտութեան ծառայող նրանց մէջ բաւական զարգացած է: (Եր. 130—132):

Ինչպէս երեւում է նոյն-իսկ այս երկրող օրինակից, հեղինակի կարծիքների ու դիտողութիւնների մէջ կան եւ սխալներ, բայց բարեբախտաբար դրանք սակաւաթիւ են եւ ոչ գիտակցօրէն կատարված:

Նոր ստացված գրքերը 1) Ընտանեկան դպրոցները, վէպ Ժ. Մաթէի, թարգմանեց Կարապետ Եւթիմեան, 3 հատոր, Կ. Պոլիս 1900 թ. 2) Հայի երեսնայ ա. Գրիգոր—Լուսաորի կեղեցիկ, Երևան, 1902 թ.—3) Աղբարի Հայը, Յար. Բաշ. ձուլորեն, Թիֆլիս, 1902 թ. գինն է 25 Կ. 4) Տեղեկագիր Հայրապետի յոբելանի ա. Լուս. աղբ. Հիւանդանոցի միւսնայ, 1801—1901 թ. Ձմեռնայ, 1901 թ. 5) Կարսում արարութիւն, չինական լեզու, Վ. Փափազեանի, հրատարակ. Յ. Մաթէի և Մեռու. Գալանթի, Բագու, 1902 թ. գինն է 5 Կ. 6) Քառորդ, գրական և թատերական հանդէս, № 2, գիրք Բ. Թիֆլիս, 1901 թ. 7) Համառոտ հայերի միջին և երկրորդ Յովհաննէս առաջ եկեղեցու Գանձակայ վանք 1899, 1900 և 1901 տարի. 8) Армянский поэты «Смелые Шах-Азиз», критический этюд Юрия Веселовского. Москва 1902 г. գինն է 1 ր. 9) Понударная Бесѣда о Зубах А. Апрель, Харьков, 1902 г. գինն է 60 Կ.:

ՄԻ ՆՈՐ ԼՐԱԳԻՐ ԱՍՏՐԱՆՆԵՐԻՄ

(Նամակ Աստրախանից)

Գաւառական մամուլի դերը մեծ է, երբ նա կանգնած է որոշ բարձրութեան վրա, երբ նա կոչված է առանց ազգի եւ կրօնի խորհրդանշան ծառայելու գաւառացու եւ գաւառի շահերին:

Բայց ինչ է գաւառը: Երբ այս տողերը գրում էի՝ ներս բերին նոր ստացված լրագիրները: Մարտիկերով կարգացի Գուրգից քաջված հեռագիրը, որ գուժում էր սատոյցի պղծելը եւ հարկւրաւոր ձկնորսների սատոյցի կտորի վրա ծովը քշելը... Թարմ տպագրութեան տակ՝ հէնց այդ վիճակումն էլ գաւառը պատկերացաւ իմ առաջ: Գաւառն էլ մի սատոյցի կտոր է, բաժանված ընդհանուր զանգուածից, մայր կտորից: Նրա վրա թափված են զանազան ազգութիւնների, հասկացողութիւնների, հոգեկան ու մտաւոր կարողութիւնների տէր անհատներ: Նրանք զէպի խաւարի ծովը, զէպի կորուստ են դիմում... Անս փրկարար նաւը կարելւմ է հեռուից: Նա մտնելու է նաւապետի պատրաստութիւնից եւ փորձառու ղեկավարութիւնից է կախված արագ ընթացք ստացած սառցակոյտին մօտենալը, վտանգվածներին ազատելը կամ անզգուշաբար նաւը սառոյցին դարկելն ու խորտակելը:

Այդպէս էլ կարծած, մոռացված գաւառին օգնութիւն հասնող նաւերից մէկն էլ մամուլը, լրագրութիւնն է: Հրատարակչական գործի ղեկը որքան բարեխիղճ, փորձառու եւ պատրաստված անձերի ձեռքին է, որքան գործին գլուխ են անցել մաքուր, հասարակութեան շահերին նուիրված անհատներ՝ այնքան էլ գաւառի փրկութիւնն գործը, ժողովրդի զարգացման եւ առաջադիմութեան գործը ապահովված է, այնքան էլ բազմաթիւ գաւառական ազգայնականութեան շահերը պաշտպանված են, այնքան էլ ընդհանուր մարմնից կտրված, պղծված անհատները իրանց շահերով մօտենում, կապ են դրում զէպի մայր զանգուածը: այնքան էլ այդպիսի լրագրութիւնը ստեղծում է անողջ ու ղեղձված եւ զգայուն արտով ընթերցողներին մի ստուար, պիտանի բանակ:

Բայց ցաւելով այստեղ պիտի արձանագրենք, որ գաւառական մամուլի ղեկավարները իրանց վսեմ կոչման չեն համապատասխանում: Դրանց մեծ մասը գաւառներն ու գրիչը վաճառքի հանած թերութեան են, որոնք իրանց թերթերը սեփական ետաժողութեան կամ զրպանին են ծառայեցնում եւ կամ «աշխարհի գործերի» ձեռքում մնալով զէպ են դարձնում: Այդպիսի ծախված մամուլը մի պարագիտ է, մի բարոյական բորբոսութիւն է, որ այլանդակում է ամբողջ գաւառի հասկացողութիւնը, յեղաշրջում է նրա հասարակական կարծիքը, Թուրքականում է գաւառական կեանքի կանոնաւոր:

չընկալողութիւնը, խանգարում է նրա կուրսուրական զարգացումը եւ պատրաստում է մի հիւսնադ, թող ուղեղի փէր, ուղեղութիւնից դուրս ընթերցող սերունդ, որ շատ սահմանափակ պահանջների տէր է եւ մեծ, անչափ բաւականութիւն է զգում: միայն պատկերներ, անուանարկութիւններ, բարձրասանքներ, սրա կամ նրա վրա ցեխ չարտող յօդու ածներ եւ այլն կարգալ լրագրում:

Անս համարեալ այսպիսի հոտած ու փոշած թերթերի պահեստ է ներկայացնում այն լրագիրների շարքը, որ հրատարակում է Վոլգայի ամբողջ երկարութեամբ ձգվող մեծ ջաղաքներում Աստրախանից սկսած. բացառութիւն է կազմում Սարատովի լրագրութիւնը: Այդ տեսակի թերթերի մէջ ուղղութիւն, որոշ ծրագիր, որոշ նպատակները որոնելը զուր ջանք է: Մի եւ նոյն համարում, մի ազատամիտ յօդուածի շարքում, կը գտնէք յետադէմ գաղափարների արտաբերում: Բանտարական հարցն հետ միասին տպագրված ինչ-որ մի խելագար տէրտէրի անհասկացալի հրաշքների մասին եւ այլն: մի խոսքով՝ դալարի բոլոր, կամ «պիտանի եւ անպիտան» գիտելեաց ժողովածուն:

Անս այդ բոլորից յետոյ, չը նայած Աստրախանում գոյութիւն ունեցող չորս լրագիրներին, վաղուց միգնում կարիք էր զգացվում ժողովրդի պէտքերին եւ առաջադիմութեանը նուիրված, ազգայնականութեան իրաւունքների պաշտպան մի լուրջ օրգանի վաղուց մեր հասարակութեան հասկացող մասը ցանկանում էր ունենալ մի այնպիսի թերթ, որ ներկայ ժամանակակից պահանջներին համապատասխանէր: ուստի մօտ երեսուն հոգուց բաղկացած մի խումբ տեղական կրթված երիտասարդներ, որոնց մէջ կան նաեւ Պետերշուրգից եկած գրականագետներ եւ մայրաքաղաքի լրագրերում աշխատակիցներ, 4 տարով կապով վերջին Աստրախանում 8—9 ամիս առաջ միայն հրատարակվող «Прикаспийская Газета»-ն ինքաշրջութեան ծանր եւ պատասխանատու պաշտօնը յանձն առաւ: Վ. Սերեժնիկով եւ հրատարակութիւնը՝ Սարգիս Խաչատուրով, երկուսն էլ երեւոյեալ հաւատարմատարի օգնականներն «Прикаспийская Газета»-ին ինչ ապագայ է խոստանում՝ դժուար չէ գուշակել, եթէ իր ներկայ դէմքը չը փոխի: Երիտասարդ լրագիրը հէնց սկզբի համարներից մի համարելի, մտաւոր ուղղութիւն է ցոյց տալիս, չուրված է ընդհանուր շահերին եւ խմբի շարքում առ այդ թերթը ծանրակշիռ ներթեր չէ տալիս, բայց միեւնոյն ժամանակ նրանում իրար հակասող գրուածքների չէք պատահում, եւ ամեն անգամ թերթը վերցնելիս, գոնէ համոզված էք, որ ազատ էք սրա կամ նրա հասցէին անտեղի գովասանք կամ հայհույանքներ տեսնելուց, եւ որ գլխաւորն է՝ խաղաղ հոգով սկզբից մինչեւ վերջ թերթը կարգում էք տակը իրարաւորման զգալու կամ ծաղրի ենթարկվելու: Այդ լրագիրը առհասարակ հետաքրքրական է, եւ խմբագրութիւնը աշխատում է նրա բաժինները աւելի եւս բովանդակային դարձնել: այնպէս որ այդ օրգանը ապագայում կարող է հաւասարապէս օգտակար դառնալ Աստրախանի, Ղազարի, Պետրովսկի, Դարբանդի, Դուբայի, Բագուի եւ առհասարակ այն բնակավայրերի համար, որոնք փոված են ընդհանրական Կասպիականի արեւում եւ կապված են իրար հետ տեղական շահերով եւ արդիւնաբերական գործը կապերով: Բացի այդ՝ յիշեալ լրագիր խմբագրութիւնը յանձն է առել մի հասկացելի նախաձեռնութիւն, որ շատ հազարագին է ուսումնական մէջ, այն է՝ ներկայ տարվայ յունվարի 1-ից ձրի պատասխանում եւ բաւականութիւն է տալիս իր այն բաժանորդներին, որոնք դիմում են խմբագրութեանը զանազան իրաւաբանական հարցերով եւ խորհուրդներով: (Իմեղ կարելի է բերանացի կամ թղթով):

Անս այս բոլորը ի նկատի առնելով, «Прикаспийская Газета»-ի գոյութիւնը անհրաժեշտ է դառնում, ուստի եւ վերեւ յիշված քաղաքների ինտելիգենցիայի ուշադրութիւնն եմ հրաւիրում ներկայ թերթի վրա: Տեղական, միայնակ շահերով հետաքրքրվող երիտասարդութեան ուշադրութիւնը ամենամեծ ապահովութիւն եւ քաջակերպութիւն կը լինի «Прикаспийская Газета»-ի երիտասարդ վարիչների եւ նրանց ձրի աշխատակիցների համար՝ աւելի եռանդով գործելու եւ լրագիրը տեղական բազմազան ազգայնականութեան մտաւոր եւ արդիւնաբերական զարգացմանը ամենայն ճշմարտութեամբ ծառայեցնելու:

Գ. Բաշ. Մկրտումեան

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՆՈՒՑ

Մարտի 5-ին

Ամսին մէկին կօմիտէտի խորհրդում նորից հրապարակ էր հանվել թուրքերին իրանց այժման թաղից բարձր, քաղաքի վերին մասը տեղափոխելու հարցը:

Ինչու եւ մի քանի մարդիկ այդքան տոչտովում, որպէս զի իրականացնեն իրանց, միմիայն իրանց այդ իղձը, քանի որ դա ժողովրդի պահանջը, նրա ցանկութիւնը չէ—մենք այդ չենք կարողանում հասկանալ: Ձեռք կարծում, որ սրանք այնքան էլ միամիտ լինեն, որ չը մտածեն թէ քաղաքը չէ կարող տեղից շարժվել զանազան շատ պատճառներով: Երկրաչափի ներքեւի թաղին պատճառած աւերումները ունեն մի շարք այլ պատճառներ, որոնց չը տեսնելը, կամ գոնէ չը տեսնել ձեռնադր տարօրինակ է: Երբ նրանց ասում են, թէ Շամախու վերին թաղից շատ բարձր գիւղեր էլ են փլվել, պատասխանում են թէ՛ այստեղ (ներքեւի թաղում) գետինը իրեւն հին քաղաքի տեղ՝ թող էլ Ասում են, հին քաղաքի տեղը միայն ներքեւի թաղում չէ սահմանափակվել, այլ մեծ տարածութիւն, նրա հետ միասին եւ վերին թաղն էլ է ծածկել եւ, բացի այդ, երկրաչափը այս անգամ փլցրել է շատ տներ ուղղակի ժայռի վրա կառուցված, եւ թէ՛ այստեղ տեղի չինութիւնները՝ ապահովված կը լինեն նոր կարգերով: դրան պատասխանում են «Նեյնիմեթով» եւ հարցը դնում են ուրիշ հիմքերի վրա, թէ շատ կենդանիներ են մնացել փլատակների տակ, որոնց զարգացողութիւնը ցաւ կառաջացնէ: Պոյցիլան սրան պատասխանում է, թէ նախի եւ քաղաքում եղած ձիաների պարզ հաշից երեւում է, որ անասունները աղէտի ժամանակ ավտոններում չեն գտնվել: Իսկ եղածներն էլ հանվել են համաձայն պ. գաւառապետի ժողոված տեղեկութիւնների: Դրա դէմ գտնում են արդէն ուրիշ պատճառ, թէ իբր տեղը վատառող է եւ երբ տեղային, կիմայական եւ այլ առողջապահական տեսակետներից ուսումնասիրած բժիշկներից պատասխանում են թէ՛ պարտնենք, այդ մեր գործն է, մեզ դիմեցէ՛ք եւ մենք ձեզ այդ կողմից էլ կը միամտացնենք—էլի անհիմն պատճառաբանութիւններ են մէջ բերում: Եւ վերջապէս, երբ այդ պարտնենքին ասում են, թէ՛ այդ հարցը պիտի վճռի երկրի վարչական բարձր շրջաններում, սկսում են մէջ բերել այնպիսի պատճառներ, որոնց նպատակութիւն կը տան կամ Շամախուն չը ձանաղդները, կամ շատ միամիտներ իսկ նրանք, որոնք ծանօթ են մեր նիստ ու կացին, թուրքերի այժման թաղի հետ կապ ունեցող բազմաթիւ տնտեսական, շինարարական, կրօնական, առեւտրական եւ այլ հարցերի հետ, նրանք այդ փաստաբանութիւնների հետ միանգամայն չեն համաձայնվի:

Նախ պիտի ասենք, որ այսպիսի մի հարց ծագել էր 1872 թ-ի երկրաչափից յետոյ: այն ժամանակ աւելի լաւ ճառեր էին խօսել, բայց իրականութիւնը տեսէք, թէ ինչ ցոյց տուց: Բաժանեցին տեղեր հայերին եւ թուրքերին: Բաժանեցին փող, ինչպէս երկու թաղերում բազմաթիւ տներ, անուններ կնքեցին, ինքնաբերական է «Թեազա շահար», բայց ինչ: Ապագայից մէկ-մէկ ծրվելով, հիւանդանոցով, կոտորվելով (այդ տեղը վատառողջ քամի բռնող է) եւ շատ վերեւ ներքեւ անելուց յետոյ, մահաւանդ տեղի հետաւորութիւնից յոգնած, վաղուց արդէն մաքրվեցին այդ տեղերը բնակչներից եւ օղը ցնդվեցին այն յոյսերը ու ծրագիրները, որ կազմած ունէին դեռ այն ժամանակվայ սրտաւատ ժողովրդասէրները:

Շամախեցին, ինչպէս արդէն այդ բովերից անց կացած, իրաւունք ունի ասելու խաղի մէջ ասվող այն բառերը, թէ «ցերեկվայ քո տեսածները եւ դիւրեւում եմ տեսել»:

Այն թուրքերից մէկը, որ այժմ գործում է վերոյիշեալ խմբի հետ, գործի ծանրութիւնը այս բաներով էր պատկերացնում: «Ինչքան հեշտ էք արտասանում տեղափոխելը բարձր, կարծէք հէնց միշտ բառի հետ է լինելու ձեր գործը. դա մի խօսք էր, ասացիք ու պրծաւ: Բայց կատարելու դժուարութեան եւ ընդարձակ արգելքների չափն էլ տեսնել կարողանում էք»: Եւ իրաւ, հեշտ է ասել, բայց իրազեկութիւն համար հարկաւոր տարիների տեղեւած յարմարութիւնները պիտի քանգել, ոչնչացնել եւ նոյնքան էլ աշխատանք, ջանք գործ դնելով սպասել, որպէս զի նոր գաղթատեղին մի բանի գոնէ նմանի:

Թուրքերը 1) իրանց թաղում ունեն գաւառի ամեն կողմից բերող յարմար ճանապարհներ եւ խճուղին 2) Բագուի հաղորդակցութիւնը

Ֆուրգոնի ճանապարհով ուղղակի կապուալ թաղի հետ 3) Միլիոններ արծէք ունեցեալն, շինարարական պարագաներ, պատրաստութիւն 4) Բազմաթիւ սրբատեղիներ, կանոնաւ, կամ քիչ նորոգութիւն պահանջներ 5) Հարկեր հազարներ արծէք ցող սայլապատակնէր կամուրջներ 6) Մի ծախս բազմաթիւ (մօտ 30) աղբիւրներ, անցքեր 8) Հէնց իրանց ձեռքի տակ մի հարկեր այդիններ, ազարակներ եւ այլն 9) մաթիւ ջրանցքներ, նրանց փրկարար «Զարչալը»: Տեղափոխվելու դէպքում 100 հազար նոր ծախսեր պիտի ունենան եւ այն եւս ներքից մի քանի տասնեակ եւս համարել: Բաւականանալը այսքանով: Ո՞ւմ համար թուրքը բոլորը ու դան վերեւ եւ վերջապէս:

Ձեռք հասկանում այդ լուրջ եւ ծանր ինչպէս է կարելի այդքան թեթեւ կերպով բարեբալ եւ խեղճ ժողովրդի ապագայ աւելի մեծ սպասվող թշուառութեան պատկերներ:

Ս. Սարգիսեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 1

Ամսին 10-ի հոգաբարձական ընտրութիւն, որի մասին արդէն գրել եմ ձեռք, քիսս եպիսկոպոսը անմիջապէս ձեռնադրու սպանալիքի կատարման Գաղաքիս բոլոր բաժանաները այսօր, ժամը 2-ին, հրապարակաւ քանդակեալ երկու քահանայ հոգաբարձներ ընտրելու:

Նախ հրաւիրված 17 քահանաներից 7-ը մասնակցեցին ժողովին. պատճառները մի թողած, այդ 7 քահանաները քաջութիւն ցան չը համակրել այդ հակաժողովրդական քլին: Երկրորդ, հրաւիրված են ներկայ գնաց 10 քահանաներից մեծ մասը քաջութիւն ցաւ: հրաժարվել ընտրվելուց, բերելով հետեւ պատճառը՝ «Ժողովրդի մէջ ծաղկալուցութիւն, մենք կապված ենք այդ ժողովրդի հետ բարոյական եւ նիւթական շահերով: Դա չէ, եթէ ինքը ժողովուրդը ինքնաբերաբար տրեւ մեզ»: Եւ այսպէս մեր քահանաների մեծ մասնութիւնը, բացի մի երկուսից, բացէ իր մերժեց առանձնանալ ժողովրդից, յայտնեալ որ ինքը կապված է իր հօտի հետ:

Այսպէս լուծեցին զորեւան հանգույցը: քահանաները ի պատիւ իրանց, Նոյն-իսկ քիսս եպիսկոպոսի այն հարցին, «Իսկ եթէ երկուսին առաջարկեմ վեհափառին, եւ հաստատին», մեր քահանաները պատասխանեցին. «Մենք վեհափառի հրամանին իրաւունք չունենք չը հնազանդվելու: Բայց խնդրում ենք իրաւունք չունենալ չենք կարող: այդպիսի առաջարկութիւն ունենալ չենք կարող: այդպիսի առաջարկութիւն մենք այսօր լսեցինք մեր ծխակաթիլից: Այսպէս՝ մի բռնա քահանաներ բարոյական մի դաս տուեցին նախ՝ մեր հակաժողովրդական սրբազան հայրերին եւ երկրորդ՝ ինչպէս մեծախօս, թւում է—ճանաչում աւելի, քան նախորդին:

Մեր քահանաների բռնած այս դիրքը մի նոյն ժամանակ մի ապտակ էր այն մի պատգամաւորներին, որոնք աշխարհական նկրդ հանդերձ եւ Նոյն-իսկ գիտնալով կելով իրանց, համակրում էին կղերականներին: Ամօթ... հազար ամօթ:

ՆԵՐՔԻՆ ԿՈՒՐՆԻ

Շամախի քաղաքի ներկայացուցիչները տրվարի 9-ին տուին ֆիլգէլ աղետանալ Օրդինսկուն մի խղրապիր՝ ներկայացուցին Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին մէջ խնդրում են երկաթուղային գիծ անցնել դէպի Շամախի: Խնդրագրին կցված է մի տեղեկագիր, որի մէջ հաղորդվում են մի քանի տեղեկութիւններ Շամախու առեւտրական եւ գիւղատնտեսական դրութիւնը վերաբերմամբ:

Թիֆլիսի ոստիկանապետը բացատրեց տաւերին, որ հայ փախստականներին կազրելը պէտք է շարունակվի մինչեւ

«ԲԻԿԻՆ» ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ՄԼԱՏՅԱԾ ՕՐԻՆՏԱՆ